ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Վահե ԲՈՒԴՈՒՄՅԱՆ

- **ՔԱՂԱՔ / ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Բրյուսել (Բելգիայի Թագավորություն), 4-6-ը հուլիսի, 2018 թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն հունիսի 5-ին կայացած Արևելյան գործընկերության ***Կրթության, երիտասարդության և մշակույթի*** *հարցերով հանձնաժողովի առաջին հանդիպմանը:*

2018 թ. հունիսի 4-6-ը մեկնեցի Բրյուսել (Բելգիայի՝ Թագավորություն)՝ որպես ՀՀ մշակույթի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ՝ մասնակցելու հունիսի 5-ին կայացած Արևելյան գործընկերության **Կրթության, երիտասարդության և մշակույթի** հարցերով հանձնաժողովի առաջին հանդիպմանը:

Նիստը նախագահում էր ԵՀ ԿՍԳ-ի նորարարության, միջազգային համագործակցության և սպորտի տնօրեն Անտուանետա Անգելովա-Կրաստևան:

Նիստի առաջին մասում ելույթներ ունեցան ԵՄ գերատեսչությունների ներկայացուցիչներ՝ Կլեր Մորելը, Կամիլա Պարտիկան՝ ԵՀ ԿՍԳ, Անդրեյ Պավլովիչը, Մատեուշ Յեժովսկին՝ Կրթության զարգացման հիմնադրամ և այլոք: Պատվիրակությունների անդամներին, այդ թվում՝ հայաստանյան պատվիրակությանը, հնարավորություն ընձեռվեց տեղից ելույթներ ունենալու:

Այնուհետև ներկայացվեցին ոլորտին վերաբերող հակիրճ բանախոսություններ. ելույթներ ունեցան Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի ներկայացուցիչները:

Աշխատանքային նիստի երկրորդ մասը բաժանված էր երկու զուգահեռ ընտրովի աշխատարանների հետևյալ խորագրերով՝ «Կրթության որակի ապահովում» և «Աշխատանքի հասանելիություն և երիտասարդների զբաղվածություն»: Ես մասնակցեցի «Կրթության որակի ապահովում» աշխատարանին, որը նախագահեց Կլեր Մորելը:

Բանախոսները ներկայացրին եվրոպական բարձրագույն կրթության բնագավառի որակի ապահովման ուղենիշների և չափորոշիչների, դրանց նշանակության և ապահովման վերահսկողության մասին տեղեկատվությունը: Ելույթներով հանդես եկան Դեյվիդ Կրոսիերը (Eurydyce), Կառլ Դիտրիխը (Եվրոպական բարձրագույն կրթության ապահովման գրանցարան), Կլարա Էնգելս-Պերենին (ԵՀ) և Գոհար Հովհաննիսյանը (Եվրոպական ուսանողների խորհուրդ):

Նիստի ավարտին կարճ առանձնազրույց ունեցա նախագահողների հետ և շնորհակալություն հայտնեցի կազմակերպման համար՝ բարձր գնահատելով եվրոպական կրթական գործընթացներում Հայաստանի մասնակցության անհրաժեշտությունը:

Շնորհակալություն եմ հայտնում Բելգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Թաթուլ Մարգարյանին և դեսպանության ողջ անձնակազմին՝ գործուղմանս ընթացքում աջակցություն ցուցաբերելու համար:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանյան պատվիրակությունը թե՛ աշխատանքային նիստին, թե՛ աշխատարանին դրական ներկայացավ՝ տեղին արձագանքներով, դիպուկ առաջարկություններով և հակիրճ ու

բովանդակալից բանախոսությամբ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակելու քննարկումը նշված հարցերի շուրջ, նաև նշվեց ԵՄ ԱԳ հաջորդ աշխատանքային նիստի ժամկետները:

«Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի շրջանակում պայմանավորվածություն ձեռք բերվեց ակտիվացնել համագործակցությունը ծրագրի մշակութային հատվածում:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ՝

ՎԱՀԵ ԲՈՒԴՈՒՄՅԱՆ